Բ–ին Վարդավառ. Մղտեսին մատաղ արար, անդ գնացաք։

Գշի (4 Յ––լի). լուսինն նոր էր։

Տաճկունքն Եշի (6 Յ––լի) ըմբռնեալ զռամազանն։

Թ–ին օր Կիրակի. ամենեքեանս ելեալ գնացաք ի Ղալաթիա, տուն Մովսէսին մեր. և ելեալ գնացաք ի գերեզմաններն. Մղտեսին և Տէրտէրն անդ ի տունս դարձեալ և մեք անդ մնացեալ. առաւօտուն (10 Յ––լի) գնացաք ընդ նոսա ի Բեհատխանան և երեկոյին ի տունս մեր եկի։

Եշի (13 Յ––լի). փոքր Ոհան վարդապետն և Տէր Յովանէսն ի մեր ժամն եկին, և Յովանէս վարդապետն Շաբաթ երեկոյին (15 Յ––լի) և Մղտեսին մեր հաց և սեղան բերեալ նոցա. և յետ պահու ինչ ելեալ գնացաք։

Եւ առաւօտուս ԺԶ–ի օր Կիրակի. ժողով արարին Տէր Յովանէսին էջմիածնի։

Եւ այգուցս (17 Յ––լի) ելեալ գնացին վարդապետքն ի Սուրբ Գէորք։

Եւ Դշի օրս (19 Յ––լի) մեծ Ոհան վարդապետն եկն ի Լեհայ Նուիրակութենէ։

Եշի օրս (20 Յ––լի) բռնաւորք Բ գող կախեցին ի Պարմաղափուն։

Եւ Կիրակի օրս ԻԳ–ի՝ Հաճի Ղուրտն զդուստրն իւր կարգեց և ես անդ գնացի ի հարսնիք։

Եւ Դշի (26 Յ––լի) մեռաւ դուստր Զարդարին. ի գերեզմաններն գնացաք և անտի մօտ ի վարդապետսն գնացաք ի Սուրբ Գէորք։

Եւ Կիրակիս (30 Յ––լի) Զաւտար եպիսկոպոսն ի մեր եկեղեցին եկն վասն ժողովի, և էր անձրև։

Աւգոստոս ամիս օր Գշի. օլօֆէն ելաւ Տաճկաց։

Երկրորդում օր Դշի (2 Օգ––տ.). արեգակն խաւա–